

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ա. ԱՓԻՅԱՆ

Մեր երկրում իրավունքի սուբյեկտների ճնշող մեծամասնությունը իրավական նորմերի հրամանագրերը կատարում է կամավոր: Սակայն օրինական վարքագիծը հատուկ է ոչ բոլորին, և պետական իշխանությունը ստիպված է մի շարք դեպքերում գործի դնել ստիպողական միջոցներ: Դրանց կիրառումը թելադրված է պետական անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, սեփականության, հասարակական կարգի, ժողովրդավարական հասարակության բոլոր անդամների իրավունքների և շահերի պահպանմամբ: Դա նշանակում է, որ ներկա պայմաններում պետական հարկադրանքը իրեն ամենևին չի սպառել¹: Ըստ այդմ էլ դրա տեսական մշակումները և տարբեր կողմերի հետազոտությունը տակավին արդիական են: Հայկական իրավական պետությունը մշտական ուշադրություն է դարձնում օրինականության ապահովման միջոցների կատարելագործմանը: Այն մշտապես զբաղվում է օրենսդրության բարելավմամբ, իրավակարգի ամրապնդմամբ, ուշադրություն է դարձնում այն օրգանների գործունեության կատարելագործմանը, որոնք կանգնած են օրինականության և հասարակության շահերի, քաղաքացիների իրավունքների պաշտպանության դիրքերում²:

Հարկադրանքի տարբեր տեսանկյունների (ասպեկտների) հետազոտումը նկատելիորեն կհարստացնի մեր գիտելիքները այդ բարդ հասարակական երևույթի վերաբերյալ, որը ոչ միայն կնպաստի դրա սոցիալական նշանակության բացահայտմանը, այլև հասարակական հարաբերությունների պահպանման իրավական միջոցների կատարելագործմանը: Պետական հարկադրանքի գիտական վերլուծությունը ենթադրում է դրա հասկացությունների, առանձնահատկությունների, բովանդակության և այլնի դիտարկումը:

Քաղաքացիական հասարակությունում հարկադրանքի հասկացության բնորոշումը տեսական բարդ խնդիր է: Այդ հարցի մշակման համար վճռական նշանակություն ունեն ցուցումներն այն մասին, որ իրավական պետությունը, ի տարբերություն այլ տիպի պետությունների, կոչված է իրականացնելու նոր քաղաքացիական հասարակության ստեղծման ստեղծագործական, ստեղծարար գործունեություն: Տվյալ դրույթը թույլ է տալիս ստանալ ավելի լրիվ պատկերացում պետական հարկադրանքի մասին, որն օգտագործվում է իրավական պետականության կողմից հասարակական հարաբերությունների պահպանման և պաշտպանության համար:

¹ Տե՛ս **Ե. Վ. Черных**, *Юридическая ответственность и государственное принуждение*. - В кн.: "Теория государства и права". 1997, էջ 550-555:

² Տե՛ս **Գ. Տ. Казинян**, *Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в Третьей Республике Армения (сравнительно-правовое исследование)*, Եր., 1999, էջ 7-121, **Ա. Կ. Есаян**, *Бюрократизм и методы борьбы с ним в Армении*, журн. "Прокурорская и следственная практика", М., 2000, № 1-2, էջ 57-63, **Н. А. Апи-ян**, **Մ. Ա. Товмասյան**, *Законность и правопорядок в правовом государстве*, Եր., 2000, էջ 51-86, 147-170, **Ն. Ա. Ափիյան**, **Ա. Գ. Պետրոսյան**, *Իրավական պետությունը և օրինականությունը*, Եր., 2001, էջ 139-201:

Հարկադրանքը բազմաճիստ երևույթ է, նման այն բանին, որ իրավունքի նորմերը վերաբերում են սոցիալական նորմերի տեսակներից մեկին, այնպես էլ պետական հարկադրանքը համասոցիալական հարկադրանքի կառուցվածքում յուրովի տեսակ է: Այդ կտրվածքով հարկադրանքն իրենից ներկայացնում է ներգործման մի մեթոդ, որը, հարկադրողի շահերից ելնելով, ապահովում է մարդկանց կողմից գործողությունների կատարում՝ հակառակ իրենց կամքի: Դրա կարիքը ծագում է երկու սուբյեկտների հակասական ձգտումներից, որոնցից մեկը կարգադրում է մյուսին կատարել իր պահանջները: Հարկադրանքի միջոցով ճնշվում, արգելակվում են հակասոցիալական, հասարակական կամ այլ կամքի հակադրվող մարդու արարքները, սահմանափակվում է նրա գործողությունների ազատությունը, խթանվում, խրախուսվում է ցանկալի վարքագիծը: Պետական հարկադրանքը քաղաքացիական հասարակությունում՝ հանդես է գալիս որպես գոյություն ունեցող հարաբերությունների համակարգի պաշտպանման միջոց:

Այսպես կոչված, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում պետական հարկադրանքն իրականացվում էր բանվոր դասակարգի կողմից կիրառվող զանազան, ընդհուպ զինված միջամտության, հեղափոխական հարկադրանքի ձևերով «դասակարգային թշնամու» հանդեպ¹: Տապալված դասակարգերի դիմադրությունը, մանրբուրժուական տարերքի սանձարձակությունը, ավերածությունների ծանրագույն պայմանները պրոլետարական իշխանությունից «պահանջում» էին հակահումանիստական հարաբերությունների դրսևորումներ նրանց հանդեպ, ովքեր չէին ընդունում խորհրդային իշխանությունը: Իրականում պրոլետարական դիկտատուրայի դարաշրջանում պետական հարկադրանքն ուղղված էր քաղաքական ընդդիմության դեմ: Խորհրդային իրավաբանական գրականության մեջ այն գտել է հետևյալ արդարացումը. քանի որ պետական հարկադրանքը ծառայել է աշխատավոր բնակչության հսկայական մեծամասնությանը, ուստի իր էությանը այն եղել է մարդասիրական²: Դրա հետ դժվար է համաձայնել:

Իրավական պետությունում պետական հարկադրանքը իրականացվում է բացառապես իրավական կարգավորման ոլորտում, հիմնվում է նախնական համոզման մեթոդի կիրառման վրա, այն հաշվով, որ անհատների և կազմակերպությունների վարքագիծը ենթարկվի իրավաբանական հրամանագրերին³: Այն իրենից ներկայացնում է արտաքին ներգործություն վարքագծի վրա՝ հիմնված լինելով պետության կազմակերպված ուժի վրա, որն ապահովում է պետական կամքի պարտադիր հաստատումը:

Կառուցվածքային առումով պետական հարկադրանքը (ինչպես և այլ) ենթադրում է հետևյալ տարրերի առկայությունը՝ հարկադրանքի սուբյեկտի (պետական մարմին, պաշտոնատար անձ, կոլեկտիվ), հարկադրանքի իրականացման, այսինքն՝ իշխանական կամքի ներգործության գործընթացի, հարկադրանքի օբյեկտի, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը թույլ է տվել հակաիրավական գործողություններ: Պետական հարկադրանքի կիրառումը մեր հասարակության զարգացման ներկա փուլում ամենևին չի հակասում ժողովրդավարության ընդլայնման միտումներին: Մեր հայրենական օրենքները ոչ ոքի «իրավունք» չեն վերապահում խախտել հասարակական կարգը, պետության,

¹ Տե՛ս Ս. Մ. Амирханян, Из истории борьбы за власть в Армении, Ер., 1967, էջ 90-92, 94-96, 97-98:

² Տե՛ս А. И. Денисов, Теория государства и права, М., 1948, էջ 138-139:

³ Տե՛ս С. А. Комаров, Общая теория государства и права, М., 1996, էջ 246-249, 262-267, В. В. Оксоматный, Правомерное поведение. - В кн.: «Общая теория государства и права» в 2-х томах, т. 2, М., 1998, էջ 559-570, В. Н. Дмитрук, Теория государства и права, М., 2002, էջ 118-122, 124-125:

առանձին քաղաքացիների և ամբողջ հասարակության շահերը: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 և 44 հոդվածներում ընդգծված է, որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացումը չպետք է վնաս պատճառի հասարակության ու պետության շահերին, այլ քաղաքացիների իրավունքներին: Այսպիսով, հասարակության և քաղաքացիների շահերի պաշտպանությունը առանձին մարդկանց հակահասարակական դրսևորումներից տրամաբանորեն լրացնում է մեր երկրի հիմնական օրենքի ժողովրդավարական հայեցակարգը: Իսկապես, մարդիկ կարող են ավելի լավ օգտը վել իրենց ընձեռված իրավունքներից ու ազատություններից այն ժամանակ, երբ հասարակության մեջ գերիշխում է վստահության իրավիճակը, ապահովված են կարգ ու կանոնը և օրինականության խստիվ պահպանությունը: Հասարակության շահերի և քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում հատուկ դեր ունեն իրավապահական մարմինները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նշանակալիորեն բարելավեց այն բոլոր մարմինների՝ դատախազությունների, դատարանների, վարչական և պետական վերահսկողության օղակների աշխատանքը, որոնց վրա դրված է օրենքի պահանջների խստիվ ապահովումը: Պետությունն այդ բոլոր մարմիններից պահանջում է է՛լ ավելի նախաձեռնողականություն և անհաշտվողականություն իրավակարգի ցանկացած խախտման դեմ պայքարում:

Պետական հարկադրանքը՝ իբրև օրինականության ապահովման միջոց, ունի մի շարք առանձնահատկություններ: Որո՞նք են դրանք: Իրավական կարգավորման ուղրտում հետևյալներն են՝ ա) համոզման մեթոդի հետ զուգակցումը, բ) իրենց ձևով իրավական են, գ) առանձնանում է ձևային որոշակիությամբ և այլն: Նախ և առաջ պետք է ընդգծել, որ խոսելով հարկադրանքի մասին՝ պիտի խուսափել դրա գերազանահատումից: Հարկադրանքի ճիշտ իրացման և արդյունավետության երաշխիքները գտնվում են հարկադրանքի և համոզման զուգակցման մեջ: Մի մեթոդով տարվելը և մյուսի կարևորության թերազանահատումը կարող են հանգեցնել դրանց ներգործության ակնհայտ չեզոքացմանը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում համոզումը: Դա հատուկ, իրավական պետությունում գերակշռող, անհատի գիտակցության վրա ներգործման միջոցների, ձևերի ու եղանակաների զուգակցությունն է, որը նպատակ ունի ապացուցելու օրինականության պահանջների խստիվ պահպանման անհրաժեշտությունը: Հետևաբար, դիտարկվող մեթոդների ընդհանրությունը այն է, որ դրանք կոչված են ներգործելու սուբյեկտների կամքի վրա և դրանով իսկ նրանց գործունեությունը ուղղորդելու իրավաբանական նորմերին համապատասխան:

Դրանց միասնությունը գլխավորապես (ներգործությունը անհատի կամքի վրա) չի գրկում համոզմանը և հարկադրանքին իրենց առանձնահատկություններից (իրացման ոչ միանման ձևերը, կիրառման տարբեր կարգը և այլն): Մասնավորապես համոզման միջոցներին են վերաբերում բացառական, կազմակերպչական, խրախուսական և այլ միջոցառումները, որոնք նպատակ են հասարակական պահանջներին համապատասխանող սահմանումների ու հայացքների՝ սուբյեկտների վրա ներգործության ստեղծմանը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում հրատարակված նորմատիվային ակտերի վերլուծությունը վկայում է իրավունքում համոզման ուժեղացման առաջնայնության մասին:

Այդ ամենը՝ գիտական առաջընթացի արդյունքում՝ իրավունքի դեմոկրատական բովանդակության մշտական զարգացումը, իրավունքում մեր հասարակության օբյեկտիվ օրենքների մակարդակի աճը, պայմանավորում են իրավաստեղծ

՝ Տե՛ս Զ. Ս. Հակոբյան, Իրավունքի առաջընթացն ու նրա արժեքավորությունը, «Պետության և իրավունքի տեսության խնդիրներ» գրքում, Եր., 2001, էջ 134-137:

գործունեությունում ընդհանուր դրույթների (պրեամբուլաների) լայն կիրառությունը, որոնք ընդունված իմաստով իրավաբանական նորմեր չեն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ներածականում ընդգծվում է իրավունքի՝ սահմանված իրավական նորմերի քաղաքական իմաստը: Դրանում ևս իր մարմնավորումն է գտնում համոզման մեթոդը, այդ կերպ՝ հայոց իրավական պետությունը ասես դրդում է իր քաղաքացիներից հաշվի առնելու իրավական առաջնայնությունը, իր վարքագիծը գիտակցաբար համապատասխանեցնելու հասարակությունը, իր համոզմանն է, որ համոզիչ ներգործության միջոցների արդյունավետությունը շատ բանով կախված է քաղաքացիների գիտակցական մակարդակի առանձնահատկությունների հաշվառումից: Մի դեպքում անհրաժեշտ է օրենքը բացատրել նրան, ով այն չգիտի, մյուսում՝ քաղաքացիներին դաստիարակել իրավական հրամանագրերի կատարման անհրաժեշտության գիտակցության ոգով, մեկ այլ դեպքում կառավարչի իրացնել պետական հարկադրանքի միջոցներ, երբ սուբյեկտը չի ուզում իր վարքագիծը ենթարկել օրենքին: Համոզումը, մեր կարծիքով, չի կարող և չպետք է հանգեցնի անվերջ քարոզի և թողտվության՝ նրանց հանդեպ, ովքեր այն ուղղակի արհամարում են: Այդպիսի դեպքերում մարդկանց վրա ներգործելու գործընթացում աստիճանաբար հայտնվում է ստիպողական տարրը, ապա հանդես կարող է գալ նաև հարկադրանքը:

Հայ հասարակության զարգացման ժամանակակից փուլը պահանջում է իրավակարգի պահպանման ոլորտում հարկադրանքի և համոզման ճյուղ կիրառություն: Եվ դա իր համապատասխան արտացոլումն է գտնում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունում: Մասնավորապես նախատեսված է ազատագրվման դեպքում ընդլայնել պայմանական դատվածության հնադարությունները՝ պարտադիր աշխատանքի ներգրավմամբ և առանձին գաղութնակավայրերում տեղավորմամբ, այն անձանց դեպքում, որոնք դատվել են անզգուշորեն հանցագործություն կատարելու համար:

Պետք է համաձայնել այն կարծիքի հետ, որ պետական հարկադրանքը իբրև օրինականության ապահովման միջոց, իրավական նորմ է՝: Հայկական իրավական պետությունը քաղաքացիներին և հասարակական կազմակերպություններին իրենց իրավունքների պահպանման և պաշտպանման նպատակով կատարվող ինքնազուլիս գործողություններ թույլ չի տալիս, բացի ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության իրավիճակի դեպքերից, երբ թույլատրվում է անհատական արձագանք կամ ներգործություն: Պետական հարկադրանքը, հասարակության շահերից ելնելով, իրականացվում է պետական իշխանության համապատասխան իրավասու և իրազեկ մարմինների կողմից: Հատուկ իրավապահպանական գործունեությամբ զբաղվող մարմինները նախ և առաջ դատարաններն են, դատախազությունները, նախնական հետաքննության օրգանները: Դրանք միմյանցից տարբերվում են անմիջական խնդիրներով, կազմակերպչական և գործունեության սկզբունքներով: Սակայն իրավապահպանական գործունեությունը, որպես կանոն, դրանց աշխատանքի հիմնական բովանդակությունն է: Երկրորդ՝ պետական հարկադրանքը ենթարկվում է հայրենական իրավունքի ընդհանուր սկզբունքներին, արտահայտում նրա ժողովրդավարական բովանդակությունը, իսկական մարդասիրությունը, ենթադրում է պատասխանատվությունը մեղքի համար, բացառում է իրավապահ մարմինների գործունեություններում ամեն տեսակի կամայականություն, արտացոլում պետական հարկադրական միջոցների արդարացիությունը: Երրորդ՝ պետական հարկադրանքը

⁷ Տե՛ս **В. В. Лазарев, С. В. Липень, Теория государства и права, М., 1998, էջ 370-372, 374-376, В. С. Афанесьев, Законность и правопорядок. - В кн.: "Теория государства и права", под ред. проф. В. В. Лазарева, М., 2001, էջ 293-307, Э. П. Григонис, Теория государства и права. СПб, 2002, էջ 159-181:**

կիրառվում է իրավական կարգավորման ծավալի հիման վրա, հիմքի նորմատիվային սահմանմամբ: «Պետական հարկադրանքի հիմք» բառակապակցություն ասելով հասկացվում է այն բազան, որի հիման վրա անձի հանդեպ կարող են կիրառվել իրավական ներգործության միջոցներ, այսինքն՝ օրենքի, հրամանագրի, կառավարության որոշման հիման վրա, ինչպես նաև՝ ինչու՞, ի պատասխան ինչպիսի՞ հակահրավակ գործողությունների են դրանք կիրառվում: Մեր կարծիքով, պատասխանատվության հիմք կարող է ծառայել հենց այն, որ իրավախախտը կամային վարքագծի այնպիսի տարբերակ է ընտրել, որը վնասակար է հասարակության համար, հակասում է ժողովրդի կամքին: Չորրորդ՝ հայրենական օրենսդրությամբ հարկադրանքի միջոցները կիրառվում են պահպանիչ իրավահարաբերությունների շրջանակներում՝ կիրառելի գործունեության միջոցով: Իրավունքի իրացման այդ ձևը միակ ուղին է, որի միջոցով իրավական կարգավորման մեջ փաստորեն իրականացվում է հարկադրանքի ներգործությունը: Հիմազերորդ՝ պետական հարկադրանքի ողջ գործընթացը հիմնվում է օրինականության պահպանման վրա, որն ապահովվում է երաշխիքների լայն շրջանակի օգնությամբ (պետական վերահսկողություն, դատախազական հսկողություն՝ իր երկու ուղղություններով՝ նշված «Հայաստանի Հանրապետության դատախազության մասին» օրենքում, պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկում և այլն): Մեր հասարակությունում պետական հարկադրանքի առանձնահատկությունների վերհանումը ենթադրում է դրա այն գծի դիտարկումը, ինչպիսին ձևային որոշակիությունն է: Ինչո՞ւ է այն դրսևորվում: Առաջին՝ իրավունքի նորմերն իրենց մեջ ավելի կամ պակաս չափով են պարունակում արգելակող կամ թույլատրող գործողությունների նկարագրություն: Դրանք, որպես կանոն, ստույգ և ճշգրիտ մատնանշում են հարկադրական ներգործության հիմք ծառայող իրավաբանական փաստարկները, ինչպես նաև այն մարդկանց իրավունքների ու պարտականությունների շրջանակը, ում հանդեպ իրացվում են հարկադրական միջոցները: Երկրորդ՝ իրավունքի նորմերը վաղօրոք սահմանում են վավերացումը (սանկցիան), այսինքն՝ կոնկրետ կանոնախախտման համար ներգործության չափերը: Ընդ որում, իրավական հարկադրանքի սահմանները որոշվում են հստակ և մանրամասն, ինչը չի կարելի ասել բարոյական ներգործության մասին: Բարոյականության նորմերը, ի տարբերություն իրավաբանական նորմերի, չունեն ստույգության, կոնկրետության և որոշակիության այդպիսի աստիճան, չեն պարունակում պատասխանատվության տեսակի ստույգ ցուցում, դրա «չափաբաժինը»: Երրորդ՝ հարկադրանքի եղանակների իրացման գործընթացը ենթադրում է նյութական և դատավարական իրավունքի նորմերով սահմանված խիստ կարգ, արարողություն: Դրանցում նույնպես մանրամասն կանոնակարգվում են իրավակիրառիչ մարմինների ու պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները: Ընձեռված իրավունքների գերազանցումը, նահանջը դրանցից կամ դրանց չարաշահումը խափանվում են իրավաբանական պատասխանատվության միջոցներով (կարգապահական, վարչական, քրեական):

Հետազոտվող խնդրի ծրագրով չափազանց կարևոր նշանակություն ունի պետական հարկադրանքի բովանդակության բացահայտումը: Իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների տարատեսակությունը թույլ է տալիս առանձնացնել պետական հարկադրանքի հետևյալ տեսակները՝ քրեաիրավական, քաղաքացիաիրավական, կարգապահական և վարչաիրավական: Իրավակարգի պահպանման գործում գործառական նշանակությամբ առանձնացվում են նախագոյազական, խափանման և պատժի միջոցները: Չնայած տվյալ

* Այդ մասին մանրամասն տես՝ Ն. Ա. Ափիյան, Իրավաչափ վարքագծի սահմանները, Եր., 2002, № 18, էջ 48-53:

՝ Տե՛ս Օ. Յ. Лейст, Методологические проблемы юридической ответственности. - В кн.: "Проблемы теории государства и права", М., 1999, էջ 484-489, 495-497:

դասակարգումն էլ տարածում է ստացել իրավաբանական գրականության մեջ, բայց այն, մեր կարծիքով, կարիք ունի որոշ լրացման: Բանն այն է, որ հարկադրական միջոցների գինահանցում նշանակալից տեղ են զբաղեցնում վերականգնման միջոցները (պաշտպանության եղանակները, ձևերը): Դրանց թվին են պատկանում ընդհանուր սեփականության հարկադիր բաժինը, գործուղումների դեպքում փոխհատուցվող գումարների բռնագանձումը, աշխատողին սխալմամբ վճարված գումարների հետպահումը և այլն: Իրավաբանական գրականության մեջ հաճախ պաշտպանության միջոցները նույնացվում են իրավաբանական պատասխանատվության հետ: Կարծում ենք, որ դա այնքան էլ ճիշտ չէ, քանի որ նշված միջոցները իրավակարգի ապահովման մեջ միանման գործունեությունն չեն կատարում: Վերականգնողական միջոցների գործնական նշանակությունը որոշվում է նրանով, որ հաճախ միայն դրանց օգնությամբ կարելի է ապահովել մարդկանց խախտված իրավունքները:

Այսպես, գրպարտության և վիրավորանքի դեմ պայքարի քրեա-իրավական միջոցները երբեմն բավականաչափ գործունե չեն ստացվում համապատասխան իրավունքները խախտված, ոտնահարված քաղաքացու պատվի և արժանապատվության լիարժեք ապահովման գործում: Օրինակի համար, եթե այս կամ այն արաքը համաներման կիրառման կապակցությամբ մնում է անպատիժ, ապա շրջապատում տպավորություն կարող է ստեղծվել, թե ճշմարիտ է եղել տարածված սուտ տեղեկատվությունը, թեև այն արատավորել է մարդուն: Դրա համար էլ այդպիսի դեպքերում վերականգնողական միջոցները քաղաքացիների և կազմակերպությունների շահերի պաշտպանության կարևորագույն գործոններ են:

Պաշտպանության միջոցների կիրառումը առաջին հերթին նպատակ ունի ապահովելու այն անձանց շահերը, ում իրավունքները խախտված են: Այստեղից էլ ծագում է պաշտպանության միջոցների նշանակումը, որպեսզի վերականգնվեն, վերահաստատվեն իրավական նորմալ կապեր: Յալոբ, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունում բացակայում է դիտարկվող խմբի՝ հարկադրանքի միջոցների հաստատական տերմինաբանական նշումը¹⁰: Նորմատիվային ակտերում հաճախակի են հանդիպում այսպիսի ձևակերպումներ. ինչպես՝ «պատասխանատվություն անիրավաչափ գործողություններով վնասի համար» և այլն: Այդ ամենը հանգեցնում է տարաբնույթ իրավական հասկացությունների ոչ հիմնավոր միավորման:

Իրավական ակտերի պատմական վերլուծության լուսի ներքո նույնպես չի կարելի համաձայնել վերականգնողական միջոցների ինստիտուտի առանձնացման իրավաչափությունը վիճարկող հեղինակների հետ¹¹: Հայրենական իրավունքի պատմությունն սկսվեց վերականգնողական միջոցների զարգացումներից, այլ ոչ թե իրավական պատասխանատվությունից: Իրավական տեսակետից արտադրության միջոցների սեփականաշնորհման ինստիտուտը կարելի է դիտարկել իբրև վերականգնողական միջոց, այլ կերպ՝ ժողովրդին է վերադարձվել այն, ինչը պետք է նրան պատկաներ: Կարելի է ցույց տալ հայրենական օրենսդրությամբ կիրառվող վերականգնողական միջոցների մի շարք տարբերակիչ առանձնահատկություններ:

¹⁰ Հավանաբար այդ կապակցությամբ իրավաբանական պատասխանատվության թվին են դասվում պարտքի հարկադրական վերգրումը, երեխաների պաշտպանության հանդեպ իրենց պարտականությունները չկատարող ծնողներից դատական կարգով այիմնսի գանձումը, ինքնագլուխ կերպով բնակտարածությունն զբաղեցնող անձի արտաքսման դեպքերը, գույքի հարկադիր բնեղեն վերադարձը տիրոջը մեկ ուրիշի կողմից՝ ժամանակավոր տիրելու և օգտագործելու դեպքում և այլն:

¹¹ Ст'я Ю. Г. Басин, А. Г. Диденко, Защита субъективных гражданских прав, журн. "Юридические науки", вып. 1., Алма-Ата, 1971, էջ 4, В. Н. Власов, В. В. Низовцев, В. А. Шевченко, Основы правоведения. Ростов-на-Дону, 1997, էջ 48-49, 52-54, 114-116, 124-126, В. В. Глушенко, Теория государства и права. Системно-управленческий подход, г. Железнодорожный, Московская область, 2000, էջ 345-347, 350-352:

Դրանք առավել հստակ ի հայտ են գալիս դիտարկվելիք միջոցների և իրավաբանական պատասխանատվության միջև սահմանազատիչ գծերի հաստատման դեպքում: Այդպիսի սահմանազատում անցկացվում է՝ ա) հիմնական ուղղվածությամբ (պատասխանատվությունը նախ և առաջ ուղղված է դեպի իրավախախտը, իսկ իրավունքի պաշտպանությունը ոչ միայն և ոչ այնքան խախտողին, որքան իրավագորին), բ) կիրառման հիմքերով՝ պատասխանատվությունը ծագում է միայն իրավախախտման առկայության դեպքում (մեղավոր, հասարակությանը վնաս պատճառող, հասարակության կողմից դատապարտելի արարք). իսկ իրավունքի պաշտպանությունը թույլատրելի է և օրյեկտիվորեն հակաիրավական գործողությունից կախված, իսկ մի շարք դեպքերում էլ՝ հակաիրավականության բացակայության դեպքում (վնասի հատուցումը, որ հասցվել է գույքը փրկելու ծամանակ), գ) ֆունկցիաներով և դիտարկվող կատեգորիաների բովանդակությամբ (իրավաբանական պատասխանատվության գլխավոր ֆունկցիան սուղաբն է, պատիժը, իսկ վերականգնողական միջոցների ֆունկցիան հանգեցնում է իրավունքի պաշտպանության իրավաբանական պարտականությունների կատարման ապահովմանը), դ) պահպանական իրավահարաբերությունների մասնակիցների վարքագծի վրա ներգործության եղանակներով (պատասխանատվությունը միշտ ենթադրում է իրավախախտի գիտակցության բարոյախոգեբանական բարեփոխությունը և միշտ զուգակցված է իրավախախտի դատապարտմամբ, կշտամբմամբ, նրան որոշակի գրկանքներ պատճառելով, իսկ իրավունքի վերականգնումն ունի ներգործության միջոցների առավել ընդարձակ համալիր, օրինակ՝ իրավունքի ճանաչումը, դրա հարկադիր կատարումը):

Պետական հարկադրանքի բովանդակությունը կարող է հետազոտվել դրա նյութական և դատավարական փուլի վերլուծությամբ, կառուցվածքային տարրերի փոփոխության կտրվածքով և այլն: Մասնավորապես, պետական հարկադրանքի միջոցների համակարգում մեծ տեղ են զբաղեցնում բարոյական ներգործություն ունեցող միջոցները, այնպիսիք, ինչպես դիտողությունը, նախազգուշացումը, հասարակական պարսավանքը և այլն:

Պետական հարկադրանքի նշված և մյուս կողմերի ուսումնասիրությունն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Այն կնպաստի քաղաքացիների և պաշտոնատար անձանց գիտելիքների, հասարակական հարաբերությունների պահպանության իրավական միջոցների մակարդակի բարձրացմանը, անհրաժեշտ իրավաստեղծ գործունեության համար: Հայտնի է, որ հայրենական գործող օրենսդրությունը մշտապես կատարելագործվում է: Դրա մասին են վկայում մի շարք հանգամանքներ: Պատկերացնում ենք, որ ապագայում իրավաբանական պատասխանատվության գլոբալ խնդիրների մշակման դեպքում անհրաժեշտ է լուծել իրավապահպանական միջոցների տեսակների և դրանց կիրառման հիմքերի հարցը: Խոսքը, մասնավորապես, վերականգնողական միջոցների (պաշտպանության միջոցների)՝ իբրև ինքնուրույն իրավական ինստիտուտի առանձնացման մասին է, քանի որ հազիվ թե նպատակահարմար է «իրավաբանական պատասխանատվություն» հասկացության մեջ ընդգրկել տարաբնույթ իրավական երևույթները: Տվյալ հարցի լուծումը հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման օղակներից մեկն է:

Н. А. АПИЯН - Понятие государственного принуждения и его особенности. - В статье раскрывается содержание понятия “государственное принуждение”, дана его всесторонняя характеристика. Научно доказано, что принуждение представляет собой метод воздействия, который обеспечивает совершение действий людьми вопреки их воле, в интересах принуждающего.

Большое место в статье отведено анализу основных особенностей государственного принуждения, отличающих его от других правовых явлений.